ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2014թ.

ՈՐՈՇՈՒՄ N 29

ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 23.09.2014Թ. ԹԻՎ 8 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ կետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Վայք համայնքի ավագանու 23.09.2014թ-ի թիվ 8 նիստի օրակարգը.
1. Համայնքի բյուջեում և նախահաշիվներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:
2. Վայքի տարածաշրջանի հոգևոր հովիվ Տեր Մարտիրոս /Համլետ/ ավագ քահանա Ավետիսյանին Վայքի քաղաքային համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու մասին:
3. Վայք քաղաքի բնակչ Արամ Արամյանի տնամերձ հողամասի գործառնական նշանակության փոփոխության մասին:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՎԱՀԵ
2. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ
3. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԱՐՇԱԿ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
5. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՀԵ
6. ՂԱՋԱՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ
7. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
8. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆ**

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2014թ.

ՈՐՈՇՈՒՄ N 30

ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵՎ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկած հետևյալ փոփոխություններին.

1. Համայնքի բյուջեի եկամտային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա/ գույքահարկ փոխադրամիջոցների համար հոդվածում պլանային մասում ավելացնել 1 800 000 /մեկ միլիոն ութ հարյուր հազար/ դրամ:

բ/ գույքահարկ շենքեր շինությունների համար հոդվածում պակասեցնել 500 000/հինգ հարյուր հազար/ դրամ

գ/ համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար հոդվածում ավելացնել 340 000/երեք հարյուր քառասուն հազար/ դրամ

դ/ հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար հոդվածում ավելացնել 12 000/տասներկու հազար/ դրամ

ե/ բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար հոդվածում ավելացնել 3 600/երեք հազար վեց հարյուր/ դրամ

զ/ հեղուկ վառելիքի, հեղուկացված և սեղմված գազերի վաճառքի թույլտվության համար հոդվածում ավելացնել 550 000/հինգ հարյուր հիսուն հազար/ դրամ

է/ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ հոդվածում պակասեցնել 700/յոթ հարյուր/ դրամ

ը/ Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար հոդվածից պակասեցնել 14 000/տասնչորս հազար/ դրամ

թ/ ծխախոտի վաճառքի թույլտվության համար հոդվածում պակասեցնել 30 000/երեսուն հազար/ դրամ

ժ/ վարչական իրավախախտումների համար հոդվածում ավելացնել 300 000/երեք հարյուր հազար/ դրամ

ի/ այլ եկամուտներ հոդվածում պակասեցնել 90 000/իննսուն հազար/ դրամ

լ/ պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ/սուբվենցիաներ/ հոդվածում ավելացնել 660 600/վեց հարյուր վաթսուն հազար վեց հարյու/ դրամ

2. Համայնքի բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա/ Վայքի քաղաքապետարանի պահպանության օրենսդիր և գործադիր մարմիններ գործառնական դասակարգման բաժին 1, խումբ 1, դաս 1, ծրագիր 51, 4237/ներկայացուցչական ծախսեր/ տնտեսագիտական դասակարգմանը ավելացնել 670 000/վեց հարյուր յոթանասուն հազար/ դրամով

բ/ Համայնքի բյուջեի եկամտային այլ եկամուտներ հոդվածից 183 000/մեկ հարյուր ութսուն երեք հազար / դրամը տեղափոխել <<Վայք համայնքի բարեկարգում>> ՀՈԱԿ-ի միասնական հաշվին/աղբահանում/ գործառնական դասակարգման բաժին 5, խումբ 1, դաս 1, ծրագիր 51, 4637/ ընթացիկ դրամաշնորհներ/

տնտեսագիտական դասակարգմանը

գ/ Վայքի քաղաքապետարանի պահպանության օրենսդիր և գործադիր մարմինների գործառնական դասկարգման բաժին 1, խումբ 1, դաս 1, ծրագիր 51, 5121/տրանսպորտային սարքավորումներ/ տնտեսագիտական դասակարգումից տալ 250 000/երկու հարյուր հիսուն հազար/ դրամ ընդհանուր բնույթի ծառայություններ գործառնական դասակարգման բաժին 1, խումբ 6, դաս 1, ծրագիր 51, 5129/այլ մեքենաներ և սարքավորումներ/ տնտեսագիտական դասակարգմանը:

դ/ Վայքի քաղաքապետարանի պահպանության օրենսդիր և գործադիր մարմինների գործառնական դասկարգման բաժին 1, խումբ 1, դաս 1, ծրագիր 51, 5121/տրանսպորտային սարքավորումներ/ տնտեսագիտական դասակարգումից տալ 3 000 000/երեք միլիոն/ դրամ փողոցների լուսավորում գործառնական դասակարգման բաժին 6, խումբ 4, դաս 1, ծրագիր 51, 5113/շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում/ տնտեսագիտական դասակարգմանը:

ե/ Վայք քաղաքի անասնաբուժական ծառայություններ/ գյուղատնտեսություն/ գործառնական դասակարգմանը բաժին 4, խումբ 2, դաս 1, ծրագիր 51, 4111/աշխատողների աշխատավարձներ և հավելավճարներ/ հոդվածին ավելացնել 40 000/քառասուն հազար/ դրամ

զ/ Մշակույթի միասնական հաշվին բաժին 8, խումբ 2, դաս 3, ծրագիր 51, գործառնական դասակարգմանը 4637/ընթացիկ դրամաշնորհներ/ հոդվածին ավելացնել 150 000/մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:

է/ Արտադպրոցական դաստիարակություն միասնական հաշվին բաժին 9, խումբ 5, դաս 1, ծրագիր 51 ,գործառնական դասակարգմանը 4637/ընթացիկ դրամաշնորհներ/ հոդվածին ավելացնել 100 000/մեկ հարյուր հազար/ դրամ

ը/ Վայքի քաղաքապետարանի պահպանության օրենսդիր և գործադիր մարմիններ գործառնական դասակարգման բաժին 1, խումբ 1, դաս 1, ծրագիր 51, 4212/էներգետիկ ծառայություններ/ հոդվածին ավելացնել 200 000/երկու հարյուր հազար/ դրամ:

թ/ Վայքի քաղաքային գրադարանի հաշվին բաժին 8, խումբ 2, դաս 1, ծրագիր 51, գործառնական դասակարգմանը 4637/ընթացիկ դրամաշնորհներ/ հոդվածին ավելացնել 20 000/քսան հազար/ դրամ:

ժ/ Վայքի նախադպրոցական կրթություն միասնական հաշվին բաժին 9, խումբ 1, դաս 1, ծրագիր 51, գործառնական դասակարգմանը 4637/ընթացիկ դրամաշնորհներ/ հոդվածին ավելացնել 200 000/երկու հարյուր հազար/ դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՎԱՀԵ
2. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ
3. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԱՐՇԱԿ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
5. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՀԵ
6. ՂԱԶԱՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ
7. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
8. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆ**

Որոշման նախագիծը նախապատրաստեց
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2014թ.

ՈՐՈՇՈՒՄ N 31

ՎԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎԻՎ ՏԵՐ ՄԱՐՏԻՐՈՍ/ՀԱՄԼԵՏ/ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով որ Վայքի տարածաշրջանի հոգևոր հովիվ Տեր Մարտիրոս /Համլետ/ Ավագ Քահանա Ավետիսյանը իր կատարած աշխատանքներով նպաստել և նպաստում է համայնքի մշակույթային, հոգևոր կյանքի զարգացմանը, պարբերաբար օգնություններ է տրամադրում համայնքի զոհված կամ հաշմանդամ դարձած ազատամարտիկների և զինծառայողների ընտանիքներին, ինչպես նաև երկկողմանի և միակողմանի ծնողազուրկ երեխաներին , Ղեկավարվելով ՀՀ <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 32-րդ հոդվածի 14-րդ կետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Վայքի տարածաշրջանի հոգևոր հովիվ Տեր Մարտիրոս /Համլետ/ Ավագ Քահանա Ավետիսյանին շնորհել Վայքի քաղաքային համայնքի <<**Պատվավոր քաղաքացու**>> կոչում:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՎԱՀԵ
2. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ
3. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԱՐՇԱԿ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
5. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՀԵ
6. ՂԱԶԱՐՅԱՆ ԹԱՄՍՐՈՍ
7. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
8. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց
Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2014թ.

ՈՐՈՇՈՒՄ N 32

ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐԱՄ ԱՐԱՄՅԱՆԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14.3 հոդվածին, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 28.1 կետին համապատասխան՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն Վայք քաղաքի բնակիչ Արամ Արամյանի 0.07 հա բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողատեսքը որպես բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փոփոխելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշմամբ կատարված փոփոխությունները ենթակա են պետական գրանցման:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՎԱՀԵ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԱՐՇԱԿ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
4. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՀԵ
5. ՂԱՋԱՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ
6. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
7. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆ**

Որոշման նախագիծը նախապատրաստեց
Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ